## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր 1

## ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 2011Թ. ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ԿՆՔՎԱԾ N Վ.01 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Հրազդան 10 մայիսի 2017թ.

Հրազդանի քաղաքային համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա.Դանիելյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Կոտայքի մարզպետարանը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Լ.Պետրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձատու), մյուս կողմից, (այսուհետև՝ Վարձակալ), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1. Հրազդանի քաղաքային համայնքի և ՀՀ Կոտայքի մարզպետարանի միջև 12.05.2011թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության Վ 01 պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. Պայմանագրի նախաբանում կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Հրազդանի քաղաքային համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա.Դանիելյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Կոտայքի մարզպետարանը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Լ.Պետրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձատու), մյուս կողմից, (այսուհետև՝ Վարձակալ), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին>>:

1.2. Պայմանագրի 6.1 կետում կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Վարձավճարի չափը կազմում է յուրաքանչյուր 1մ²/ մեկ քառակուսի մետր/ տարածքի համար՝ 3542.5 /երեք հազար հինգ հարյուր քառասուներկու ամբողջ հինգ/ ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան՝ 12 233 300/ տասներկու միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր / ՀՀ դրամ. վարձավճարի մեջ ներառված է նաև

ջեռուցման գումարը, որը կազմում է՝ 6 811 600/ վեց միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

2. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**2.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*** | ***ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ*** |
| ք.Հրազդան, Կենտրոն | ք.Հրազդան, Կենտրոն |
| ՀՎՀՀ 03000453 | ՀՎՀՀ 03014577 |
| Հրազդանի ՏԳԲ 900125001124 | Հրազդանի ՏԳԲ 900121120050 |
| Հրազդան համայնքի ղեկավար՝ Ա.Դանիելյան | ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Լ.Պետրոսյան |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |